

Ս. Ղալթախչյան

ՀԱՄԱՌՈՏԱԿԻ ՄԱԴՐԱՍԱՅԻ ՀԱՅ-ԹԱԹԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Սովետական Ադրբեջանի Շամախու շրջանում կան մի քանի հայկական գյուղեր, որոնց բնակիչների խոսակցական լեզուն Շամախու բարբառն է։ Բայց այս գյուղերից մեկի՝ Մադրասայի բնակիչները, իրենց մայրենի լեզվի հետ զուգահեռ, օգտագործում են մի այլ բարբառ, որը լեզվաբանների կողմից կոչվել է հայ-թաթերեն։

Հայ-թաթերենը պատկանում է իրանական լեզվախմբի կասսայան բարբառների շարքին։

Թաթերեն բարբառները կրեքն են՝ հրեա-թաթերեն, որը լեոնային հրեաների խոսակցական լեզուն է, ադրբեջանական թաթերեն և հայ-թաթերեն։

Թաթերեն բարբառներով խոսող ժողովուրդները բնակվում են Անգր-կովկասի հյուսիս-արևելյան մասում՝ Բաքվից դեպի հյուսիս, Ապշերոնյան թերակղզին ներառյալ, մինչև Դերբենտ քաղաքը և դեպի արևմուտք՝ մինչև Բյոզաջ գետը։

Հայ-թաթերենով այժմ խոսում են երկու խոշոր գյուղերում՝ Վերոհիշյալ Մադրասա և Ղուբայի շրջանի Քիլվար գյուղերում։

Թաթերի հարցով սկսել են զրադվել դեռևս անցյալ դարի կեսերին, բայց մինչև այժմ թաթերի պրոբլեմը գիտության մեջ համարվում է չլուծված։

Թաթերեն երեք բարբառներից ուսումնասիրված է հրեա-թաթերենը՝ ուսն արևելագետ Վսեվոլոդ Միլլերի և նրա սրգի՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Բորիս Միլլերի կողմից, որոնք իրենց ուսումնասիրություններում համառոտ տեղեկություններ են հաղորդում նաև հայ-թաթերենի մասին։ Միլլերները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել հայ-թաթերենի նկատմամբ, որն իր առանձնահատկություններով խիստ տարբերվում է մյուս երկու բարբառներից, սակայն, ինչպես հիշատակում է Բ. Միլլերը, որոշ օրյեկտիվ պայմաններ հնարավորություն չեն տվել այս բարբառն ուսումնասիրելու։

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայ-թաթերի ծագման հարցը, որը նույնպես կարոտ է լուրջ ուսումնասիրության։

1927 թ. գալով Ադրբեջան, պրոֆ. Բ. Միլլերը զրադվում է նաև հայ-թաթերի ծագման և նրանց պատմության հարցերով և չնայած չի հաջողվում տալ նրանց ծագման հարցի, ինչպես նաև ընդհանրապես թաթերի պրոբլեմի լուծումը, այնուամենայնիվ կարողանում է պատմական արժեքավոր տվյալներ հավաքել և հավաքուցել, որ բացի Մադրասայից և Քիլվարից հայ-թաթերով բնակեցված են եղել շատ ուրիշ գյուղեր, որոնց անցյալի գոյությունն այժմ հաստատվում է միայն պատմական հուշարձաններով։

Պաշտոնա քաղաքից գեպի հարավ-արևմուտք, ինչպես նշում է Բ. Միլլերը, գոյություն ունի համանուն մի գյուղ, որտեղ մինչև 1918 թվականը բնակվել են թաթախոս հայեր, և որոնք ավելի լավ են տիրապետել հայերենին, քան Պիլվարի բնակիչները։ Աղսուի շրջանի Հնդար գյուղում ևս ապրել են թաթախոս հայեր և, ինչպես պատմում են մագրասցիները, խոսել են հայ-թաթերեն բարբառով։

Եթե դիմենք պատմական հուշարձաններին, ապա կտեսնենք, որ Դերբենտից մինչև Մագրասա ընկած տարածության վրա և Ապշերոնյան թերակղզում եղել են հայկական մի քանի բնակավայրեր, որտեղ մինչև այժմ պահպանվում են հին հայկական գերեզմանատներ, եկեղեցիներ, խաչքարեր և այլ հուշարձաններ։

Այդ գյուղերի թաթախոս հայերի մի մասը 1796 թվականին, Մահամմեդ շահ Կաջարի արշավանքի ժամանակ, ուսական գնե՛րալ Զուբովի դորամասերի հետ գաղթել և բնակություն է հաստատել Մոզդուլում, Աստրախանում, Տուլայում և այլ քաղաքներում, որտեղ նրանք արդեն մոռացել են հայ-թաթերեն բարբառը։ Թաթախոս հայերի մի մասն էլ օսմանների արշավանքների ժամանակ է գաղթել ուրիշ վայրեր և այնուհետև չի վերագարձել։

Հայ-թաթերենն իր վախճանն է ապրում նաև Մագրասայում և Դիլվարում։ Այդ երկու գյուղերից մեկ հաջողվել է լինել միայն Մագրասայում, որի բնակիչները պատմում են, թե ինչպես տասնյակ տարիներ առաջ իրենք գժվարացել են հայերեն արտահայտվել, որ նույնիսկ եղել են մարդիկ, որոնք հայերեն բոլորովին չեն կարողացել խոսել և եթե անհրաժեշտ է եղել բացատրվել հարևան գյուղերի հայ բնակիչների հետ, նրանք դիմել են ագրեջաններին, իսկ երբ հայը ագրեջաններն չի իմացել, այդ գեպքում ստիպված են եղել բացատրվել ձեռքերի շարժումներով ու միմիկայով։

Եյուզի ձեր մարդիկ ասում են, որ իրենց պապերն առհասարակ հայերեն չէին խոսում, բայց հաճախում էին հայկական եկեղեցի և պաշտում էին Դրիգոր Լուսավորչի կրօնը։

Այժմ հայերեն չիմացող չկա Մագրասայում, բայց մենք ականատես եղանք այնպիսի գեպերի, երբ Մագրասցի հայը հայերեն գժվարանում էր արտահայտվել և հաճախ, իր միտքը լրացնելու համար, դիմում էր թաթերենին։

Մագրասցիներն իրենց բարբառը կոչում են «ֆարսի» և միայն ուրիշներից են լսում, որ իրենք խոսում են հայ-թաթերեն բարբառով։ Նրանք իրենց ծագման մասին որևէ բան ասել չեն կարողանում, միայն գիտեն, որ իրենք հայեր են և անհայտ ժամանակներից պատկանել են հայ լուսավորչական գաղմանքին (ըստ Մ. Սմբատյանի Շամախու շրջակայքում քրիստոնեությունը գոյություն է ունեցել 5—6 դարերից սկսած)¹։

Մոկայն գիտություն մեջ պարզված չէ հայ-թաթերեն խոսող ժողովրդի հայ կամ թաթ լինելու հարցը։ Պրոֆ. Ի. Միլլերը գտնում է, որ հայ-թաթերի հարցով պետք է զբաղվեն հայագետները, և դա հասկանալի է։

¹ Մ. Սմբատյան, Նկարագիր Ս. Սահաբյանի և Շամախու թեմի, քանի արքեպիսկոպոսների անունների։

² Б. Миллер, Таты, их расселение и говоры, 1929, стр. 18.

որովհետև հայ-թաթերի և հայերի մեջ շատ ընդհանրություններ կան: Մենք հայ-թաթերի ժազման հարցը շոշափելու նպատակ չենք հետապնդում, քանի որ այդ հարցը պահանջում է ավելի բազմակողմանի ուսումնասիրություն: Մեր նպատակն է, մի հոգւածի սահմաններում, որքան հնարավոր է, համառոտ ներկայացնել նրանց իրանական բարբառի՝ հայ-թաթերենի ընդհանուր պատկերը:

1872 թ. Մաղբասայում հիմնադրվել է հայկական դպրոց, որը մեծ ազդեցություն է գործել մաղբասցիների լեզվի վրա: Այդ ազդեցությունն ուժեղացել է Ադրբեջանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ այնտեղ բացվել է միջնակարգ դպրոց:

Հայոց լեզուն աստիճանաբար դուրս է մղում թաթերենը, որովհետև հայերեն այժմ խոսում են ոչ միայն դպրոցում, ժողովներում և այլ հասարակական վայրերում, այլև բնտանիքներում:

Մաղբասցիները մեծ մասամբ հայ-թաթերենին են դիմում այն ժամանակ, երբ չեն ցանկանում, որ թաթերեն չիմացողը հասկանա իրենց խոսակցությունը: Բարբառի արդի վիճակից երևում է, որ գյուղի ավագ սերնդի հետ աստիճանաբար մեղմում է նաև հայ-թաթերենը, որը, դժբախտաբար, մինչև այժմ մնում է չուսումնասիրված: Ինչ վերաբերում է Վ.ս. Միլլերի ակնարկում հայ-թաթերենի մասին արված համառոտ տեղեկություններին, ապա պետք է ասել, որ նրա աշխատության¹ մեջ կան բարբառի լեզվական իրողությունների ոչ ճիշտ պատկերացումներ, հատկապես հնչյունաբանության բաժնում: Իսկ հետևանք է միայն այն բանի, որ հեղինակի ուսումնասիրության աղբյուրը հանդիսացել է անցյալ դարի 90-ական թվականներին հրատարակված՝ Լոպատինսկու ժողովածուից² վերցրած հայ-թաթերեն երկու պատմվածքները, իսկ ինքը՝ հեղինակը, հայ-թաթերի միջավայրում չի եղել և չի լսել նրանց բարբառի կենդանի խոսքը:

* * *

Ինչպես առաջինք, հայ-թաթերենն իրանական բարբառ է, բայց նրա հնչյունական դրությունը պարունակում է այնպիսի հայկական հնչյուններ, որոնք գոյություն չունեն պարսկերենում և նրա մյուս բարբառներում:

Այն հնչյունները, որոնք գոյություն ունեն նաև հայերենում, իրենց արտասանությամբ առանձնապես չեն տարբերվում հայերենի արտասանությունից:

ա-ն հնչվում է պարսկերեն ա-ից (ا) քիչ փակ, հայերեն ա-ի նման: ա ձայնավորը ա-ի և e-ի միջին աստիճանն է և համապատասխանում է պարսկերենի ա-ի (ا) հնչմանը, բայց զգացվում է, որ շեշտի տակ ընկնելիս ավելի շատ մոտենում է e-ի հնչմանը:

Հայ-թաթերենում նկատել ենք ա-ի մի այլ տարբերակ (ā), որն առաջացել է պարսկերենի հոգնակի na մասնիկի հնչյունափոխությունից, որտեղ առնմանության հետևանքով, հ-ի փոխարեն ևս հանդես է գալիս a ձայնավորը և հաջորդ ա-ի հետ ձուլվելով, նոր որակ է տալիս: Օրինակ՝

¹ В.с. Миллер, Очерк фонетики евратского наречия, Москва, 1900.

² «Сборник материалов по изучению кавказских племен», том XX, ч. II, 1896, стр. 25.

žūma — պ. ¹ ٢٠٠ — աչքեր, bila — պ. بيلسا — բահեր, a-ի արտասանությունը սովորական a-ի արտասանությունից տարբերվում է իր տեղում թյան երկարությամբ:

Ս ձայնավորը ս-ի քմային, միջին բարձրության տարբերակն է, որն արտասանվում է քիչ փակ:

Օ-ն նույնպես քմային արտասանություն ունի: Այս երկու հնչյունները արտասանվում են ճիշտ ադրբեջաներենի Y և Ө հնչյունների նման:

Հայ-թաթերենն ունի պարսկերենի հնչյունաբանությանը խորթ p, k, t, c, č խուլ պայթականներ, որոնք իրենց հստակ արտասանությամբ չեն տարբերվում հայերենի համապատասխան հնչյուններից: Այս հնչյուններին հանդիպում ենք ոչ միայն հայերենից ու ուսուցիչներից փոխառյալ բառերում, այլև իրանական ծագում ունեցող բառերում: Ինչպես՝ satan — պ. ساختن — անել, կառուցել, kuda — խնամի, keckeci — կայծակ, skola — զըպրոց, karot — կարոտ:

Բարբառի հնչյունական կազմում կա խոր կոկորդային մի ասպիրատ (q'), որն արտասանվում է արաբական غ հնչյունի նման և որը գոյություն ունի ոչ հրեա-թաթերենում, ոչ պարսկերենում, ոչ հայերենում և ոչ էլ ադրբեջաներենում: Սա ավելի շատ նմանվում է կովկասյան լեզուների համապատասխան հնչյունին:

Ĥ և ħ հնչյունները բարբառում տարբերվում են այնպես, ինչպես հայերենում. օրինակ՝ k'ar — պ. کر — խուլ, rahm — պ. رحم — գութ, rah — պ. رآ — ճանապարհ:

Պարսկական բաց a-ն հայ-թաթերենում, բոլոր դեպքերում, արտասանվում է մաքուր a. Ինչպես՝ bar — պ. بار — բեռ, k'ar — պ. کار — գործ, avun — պ. آهن — երկաթ, hama — պ. اما — բայց:

Պարսկերեն բաց a-ի փոխարեն բարբառում մասամբ հանդիպում ենք օ-ի, որը, հավանաբար, առաջացել է հրեա-թաթերենի անալոգիայով, որում պարսկերենի բաց a-ն բոլոր դեպքերում հնչվում է օ, իսկ հայ-թաթերենում՝ դրանք բացառություններ են. օրինակ՝ oft'ov — պ. آفتاب — արև, ov — պ. آب — ջուր, jo — պ. جا — տեղ, po — պ. پا — ոտք: Այս բառերով կազմված բարդություններում a-ն մնում է a՝ ab'gardan — պ. آبگردان — ջուր հանելու աման, inja — պ. اینجا — այստեղ:

Պարսկերեն բաղմամբանկ բառերի տարբեր վանկերում գտնվող a և ā ձայնավորները հայ-թաթերենում առնմանվում են. ինչպես՝ hava — պ. هوا — եղանակ, hama — պ. اما — բայց, hambaz — պ. سمباز — քնկեր, janavar — պ. جانور — գազան, barabar — պ. برابر — հավասար:

Ինչպես հրեա-թաթերենում, այնպես էլ հայ-թաթերենում n բաղաձայնից առաջ a-ն դառնում է ū կամ u: Օրինակ՝ zuun — պ. زبون — լեզու, nun — պ. نان — հաց, zumustun — պ. مستان — ձմեռ, heyvun — պ. حیوان — անասուն, duun — պ. دهن — բերան:

Որքանով թույլ են տվել մեր հավաքած նյութերը, e հնչյունին հանդիպել ենք միայն s, k', l, y հնչյուններից առաջ: Ինչպես՝ jrey —

¹ Կարգալ՝ պարսկերեն:

պ. جدا — առանձին, k'ey — պ. کی — երբ, heyli — հայելի, sey — շապիկ, pešmun — պ. شیمت — զղջում, yek' — պ. يك — մեկ, yel — երեսա:

Բացառությամբ են կազմում փոխառյալ բառերը և heç բառը, որն արտասանվում է hey ձևով ևս: Vedeširan բառի առաջին վանկի e-ն առանմանությամբ է:

Պարսկերեն e-ն հայ-թաթերենի մնացած բոլոր բառերում հնչվում է i, ü, ə. ինչպես՝ piyar — պ. پیار — հայր, xišk' — պ. خشک — չոր, dəraz — պ. دراز — երկար, zaləm — պ. ظالم — դժան, xərs — պ. خرس — արջ:

Մի քանի բացառությամբ բարբառում պահպանվել է նոր պարսկերենի i (ی) ձայնավորը. օրինակ՝ aziz — պ. عزیز — թանկագին, barik — պ. باریک — բարակ, bil — պ. بیل — բահ, vazı — պ. بازی — խաղ:

Պարսկերենի o ձայնավորը բարբառում հնչյունափոխվել է u, u և i ձայնավորների՝ xuda — պ. خدا — աստված, burran — պ. بریدن — կտրել, guftran — گفتم — ասել, dük'an — պ. دکان — խանութ, dizd — պ. دزد — գող, gisna — պ. گرسنه -- սոված:

Պարսկերեն u (ا) ձայնավորը ամենակայուն ձայնավորն է, որը համարյա առանց բացառության, բառասկզբում, բառամիջում և բառավերջում պահպանվել է հայ-թաթերենում u և u տարբերակներով՝ bürün — պ. بیرون — դուրս, bazu — պ. بازو — թև, buy — պ. بوی — հոտ, gus — պ. گوش — ականջ, düra — պ. دور — ծուխ, mus — պ. موس — մուկ:

* * *

Բառասկզբում a, ə, e, i ձայնավորներից առաջ b բաղաձայնը հաճախ արտասանվում է v, որն ընդհանուր հնչյունաբանության մեջ օրինաչափ երևույթ է և գալիս է հին պարսկերենից. օրինակ՝ vazı — պ. بازی — խաղ, varı — պ. برف — ձյուն, vas — պ. بس — բավական, vini — պ. بینی — քիթ: Մյուս բոլոր դեպքերում արտասանվում է b:

g բաղաձայնը a, u, o ձայնավորների հարադրությամբ հնչում է գ. ինչպես՝ gürg — պ. گرگ — գայլ, gülla — պ. گوله — գնդակ, diga — պ. دیر — ալիս:

Ձայնավորների միջև և բառավերջում ձայնավորներից հետո d բաղաձայնը հնչվում է r. ինչպես՝ amaran — պ. آمدن — գալ, biran — պ. بودن — լինել, diran — պ. دیدن — տեսնել, düra — պ. دور — ծուխ, یدر — հայր և مادر — մայր բառերում d-ն հայ-թաթերենում դարձել է կիսաձայն y՝ piyar, moy:

Ձայնավորներից հետո, բառավերջում d-ն սղվում է. օրինակ՝ bu — պ. دۇ — եղավ, zu — պ. زود — շուտ:

j և ç բաղաձայններին հանդիպում ենք darji — պ. درزی — դերձակ, prčundan — ճգմել, plačaq — լճակ բառերում և հայերենից փոխառյալ բառերում:

Շնչեղ խուլ t'-ն հայերեն տ-ի անալոգիայով մասամբ դարձել է խուլ. օրինակ՝ satan — պ. ساحت — շինել, guftran — պ. گفتم — ասել, kaстан — պ. کاشتن — փարել, rast — պ. راست — ճիշտ, աջ:

Ձայնեղ շ-ն ի ձայնավորի հարագրությամբ հնչում է z, օրինակ՝ t'iz — պ. تيز — սուր, zizvil bran — զգվել:

Բառամիջում a ձայնավորից առաջ պարսկական h-ն (o) սղվել է. ինչպես՝ naran — պ. نارنگ — դնել, naar — պ. نهار — նախաճաշ, čar — պ. چار — չորս: Բառասկզբում a ձայնավորից առաջ երբեմն ավելանում է n. օր.՝ hasal — պ. هسل — մեղր, halbat' — պ. الحبت — գուցե, երևի, hari — պ. اری — այո:

Բառամիջում և բառավերջում ձայնավորների հարագրությամբ պարսկական h-ն հնչյունավորվել է v-ի. ինչպես՝ xuvar — պ. خوار — քույր, šuvar — պ. شوهر — ամուսին, k'uv — պ. کوه — բլուր, rav — պ. راج — ճանապարհ:

k' և g բաղաձայններից առաջ r-ն դառնում է l. օրինակ՝ valg — պ. برگ — տերև, cilk' — պ. چلک — կեղտ:

ra մասնիկի r-ն բաղաձայնով վերջացող բառերում սղվում է. ինչպես՝ baṛa — պ. (باغرا) — ալգու, bila — պ. (بیلرا) — բահի, բայց՝ xunara — պ. (خانه را) — տան, sunara — պ. (شانه را) — սանրի, ura — պ. (اورا) — նրա:

Բառասկզբում r բաղաձայնից առաջ լսվում է մաքուր ə հետևյալ բառերում՝ ərəm — պ. اریم — թարախ, ərəš — պ. اریش — միրուք, ərva — պ. ارواه — ազվես: Թեթև ə է լսվում նաև st', sk' կապակցություններից առաջ. օրինակ՝ sksil satan — սկսել, stakil bran — սատկել, stol — սեղան:

* * *

Հայ-թաթերենում հոգնակին կազմվում է ā, oun, um, un մասնիկներով: Գոյականների մեծ մասը ստանում է a մասնիկը. ինչպես՝ k'aṛat' — k'aṛat'ā — (کاغذها) — գրքեր, xunā-xunāa — خانه ها — տներ, čüm-čuma — چشتها — աչքեր:

um, oun և un մասնիկներով հոգնակի են կազմում անձ ցույց տվող բառերը. ինչպես՝ mard-mardum — مردم — մարդիկ, xuvar-xuvarun — خواهران — քույրեր, yel-yeloun — երեխաներ, k'uk'-k'uk'loun — տղաներ:

Սեռական հոլովն արտահայտվում է ra (a) մասնիկի միջոցով, պահպանելով սեռական հոլովի պահպանական ձևը. օրինակ՝ p'iyāra k'ari — հոր գործը, ȳosira baṛi — հարևանի ալգին: Բակ նոր պարսկերենի իրաֆետային ձևը հայ-թաթերենում չի կիրառվում:

Հայցական հոլովն արտահայտվում է ra (a) մասնիկի միջոցով և զրո վերջավորությամբ. օրինակ՝ šagird k'aṛat' vir sat' — աշակերտը կորցրեց գիրքը, u xunara ras sat' — նա տունը կառուցեց:

Տրական, գործիական և մասամբ էլ ներգոյական հոլովներն արտահայտվում են b նախդիրի միջոցով. օրինակ՝ hambazi nazik ama bAšot — ընկերը մոտեցավ Աշոտին, namaka yazmis satam baṛalam — նամակը գրել էմ գրչով, yeloun vazi mstanənd bəhayaṭ' — երեխաները խաղում են բակում. ներգոյական հոլովը կազմվում է նաև bdari — մեջ բառի միջոցով. ինչպես՝ xunara bdari — տան մեջ, ura bdari — նրա մեջ:

նոր պարսկերենի նման, հայ-թաթերենում բացառական հոլովն արտահայտվում է az, a (պ. ا) նախդրի միջոցով. օրինակ՝ adi ye adaminj vedesi — գյուղից մի մարդ դուրս եկավ:

Հակառակ նոր պարսկերենի, հայ-թաթերենում ածականը միշտ լինում է առնչադաս. օրինակ՝ garm hava — պ. هوای گرم — տաք եղանակ, siya t'axt'a — ol سیدتخت — սե տախտակ: Թվով ածականը չի համաձայնում գոյականին:

Հարաբերական ածականները համեմատական աստիճաններ չունեն: Նրանք արտահայտվում են մեծ մասամբ in և i վերջավորությունների միջոցով. օրինակ՝ sanq'in — քարե, p'asmi — բրդյա, avoni — երկաթե:

Մրակական ածականների համեմատական աստիճանը հայ-թաթերեն բարրառում արտահայտվում է հետևյալ միջոցներով՝

ա) 'Իրական աստիճանը գործ էածվում բացառականի խնդրով. օրինակ՝ xistant'ə a cray gözali — ինքդ ճրագից գեղեցիկ ես:

բ) Դրական աստիճանի վրա diga — ավելի մակրայի ավելացման միջոցով. օրինակ՝ siya-digasiya — ավելի սե: Գերադրական աստիճանը կազմվում է, գրականի վրա ավելացնելով äbüti — ամենից բոլոր, որը bütün գերանվան բացառականն է. ինչպես՝ abüti k'ala — ամենամեծ, abüti gozal — ամենագեղեցիկ:

Դանակական թվականներն առանձնապես չեն տարբերվում նոր պարսկերենի թվականներից: Տասնավորների միացումը միավորներին կատարվում է նոր պարսկերենի նման՝ կցական սիստեմով:

Սակայն, եթե նոր պարսկերենում տասնավորները մինչև քսանը ետադաս են, ապա հայ-թաթերենում նրանք միշտ նախադաս են. օրինակ՝ 11 daəyek', 12 daədu, 19 daənuv:

Հարյուրավորները կազմվում են միավորների և sad — հարյուր բառի կցական բարդությամբ. ինչպես՝ 200 dūsad, 400 çarsad:

Դանակական թվականներին ավելացնելով ագրեջաներին inji վերջածանցը, հայ-թաթերենում ստանում ենք դասական թվականներ. ինչպես՝ I yeinji, II duinji:

Բաշխականները կազմվում են քանակականների կրկնությամբ. օրինակ՝ yek'-yek', du-dü, sa-sa:

Հայ-թաթերենում չափական թվականները նույնպես կազմվում են ագրեջանների luչ մասնիկով. օրինակ՝ yeəluչ — մեկնոց, duluչ երկնոց, daaluչ — տասնոց:

Գոտորակային թվականները սակավ գործածություն ունեն հայ-թաթերենում, որոնք կազմվում են մեծ թվի բացառականով. օրինակ՝ 1/3 asayi yek', 4/5 apanji car:

Հայ-թաթերենում թվականների հոլովները, գոյականների նման, արտահայտվում են մասնիկների միջոցով:

Անձնական գերանվան [գեմքի հոգնակին բացառականում և ներգոյականում ընդունելով նախդիրները, կորցնում է առաջի և ձայնավորը. ինչպես՝ umun > azmun, bclarmun:

Նոր պարսկերենի ا > an-an ցուցական գերանունը բարրառում քիչ

է կիրառւում, ալն էլ մեծ մասամբ բարդութիւններէ մեջ, օրինակ՝ anq'adar — պ. انقادر — այնքան, ünja — պ. انجا — այնտեղ:

Իբրեւ ստացական գերանուններ կիրառւում են անձնական գերանունների սեռականները՝ mana — իմ, t'una — քո:

Ստացական հոգերի փոխարեն կիրառւում են նաև ուղղադան հոլովով անձնական գերանունները, որոնց հետ հաճախ գործ են ածւում նույն գերանվան սեռականը և ստացւում է կրկնակի ստացական. ինչպէս հանդիպում ենք հայերեն բարբառներում. օրինակ՝ mana xunaman — իմ տունս, t'una brart'an — քո եղբայրդ:

Հայ-թաթերենում կարելի է տարբերել երեք գերբայներ անորոշ, որն ունի նոր պարսկերենի համապատասխան ձևի > t'an, > dan, ran վերջավորութիւնները. օրինակ, xundän — պ. خواندن — կարդալ, k'uft'an — պ. کوفتن — ծեծել, rasran — պ. رساندن — հասնել, վաղա-կատար, որն ունի a (պ. o) վերջավորութիւն՝ xunda — պ. خوانده — կարդացած, k'uft'a — պ. کوفته — ծեծած, rasira — պ. رسانده — հասած և ենթակայական գերբայ, որը բարբառում լայն կիրառում չունի, ստա-նում է gar վերջավորութիւն, հայերենի -ող վերջավորութիւնը համապա-տասխան՝ xundagar — կարդացող, furniündagar — խարող:

Առաջին երկու գերբայներից կաղւովում են բայի խոնարհման եղա-նակային բոլոր ձևերը, առավել անորոշ գերբայից:

Նոր պարսկերենի գեմք ցույց տվող վերջավորութիւնները հայ-թա-թերենում կրում են հետևյալ փոփոխութիւնները:

Ե գ ա կ ի

Հայ-թաթերեն	պարսկերեն	վերջավորութիւններ
1. birəm	بودم (budam)	əm م ււմ
2. birey	بودی (budi)	ey ی ււ
3. bira	بود (bud)	a د ւ

Հ ո գ ն ա կ ի

1. biring	بودیم (budim)	ing یم ււնդ
2. birind	بودید (budid)	ind ید ււք
3. birənd	بودند (budānd)	ənd ند ււն

Բարբառում եղակի թվի երրորդ գեմքի վերջավորութիւն a-ն սղվել է: Դիմային վերջավորութիւնների փոփոխութիւնները զգալի են հոգ-նակի ձևերում: Նոր պարսկերենի im վերջավորութիւն փոխարեն բար-բառում հանդես է գալիս ing վերջավորութիւնը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայերենի համապատասխան ձևի ենք վերջավորութիւնը, մասնակի հնչյունափոխութեամբ, որտեղ ե-ի փոխարեն ունենք յ, իսկ շնչեղ խուլ ք-ի փոխարեն ձայնեղ դ: Մեր կարծիքով այս հնչյունափոխութիւնները նույն հոգնակի թվի երկրորդ և երրորդ գեմքերի վերջավորութիւն հնչյուն-ների ազդեցութեան հետևանք են: Նույն ձևով ավելացել է նաև հոգնակի երկրորդ գեմքի ind վերջավորութիւն n հնչյունը:

Բարրառի բայի խոնարհման ձևերը տարբերվում են նոր պարսկերենի բայի խոնարհման ձևերից: Հատկապես պետք է նշել *mi* (می) նախդիրի դործածության մասին, որով նոր պարսկերենում կազմվում է միայն սահմանականի ներկա-շարունակական և անցյալ անկատար ժամանակները, իսկ հայ-թաթերենում *mi* նախդիր չունեն այն ժամանակները, որոնք ցույց են տալիս ավարտված գործողություն, ինչպես նաև հրամայականի և ըղձականի ապառնի ժամանակները (*gu* — ապա, *guyum* — ասեմ):

Նոր պարսկերենին չի համապատասխանում նաև ներկայի և անցյալի բայարմատների օգտագործման սկզբունքը: Հայտնի է, որ նոր պարսկերենում բայը բաղկացած է երկու հիմքերից՝ անցյալի (*گفتن* — ասել) և ներկայի (*گوی* — ասել) հիմքերից, որոնցից էլ կազմվում են բայի խոնարհման բոլոր ձևերը:

Պարսկերենում ներկա ժամանակի ձևերը երբեք անցյալի հիմքից չեն կազմվում, իսկ հայ-թաթերենում խախտվում է այդ սկզբունքը և սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է բայի անցյալի հիմքից՝ *mi*, *me* նախդիրների հարադրությամբ. օրինակ՝ *mitranəm* — պ. *میتروم* — գնում եմ, *mitranəm* — պ. *میتروم* — ասում եմ: Նոր պարսկերենի ներկա-շարունակականի ձևով արտահայտվում է հայ-թաթերենի սահմանականի ապառնի ժամանակը. օրինակ՝ պրս. *نمیگویم* — հ.թ. ապառնի *meguyum*, որ պարսկերենի ներկայի հիմքից կազմվում են նաև հայ-թաթերենի հրամայական եղանակը (*gu* — ապա, *kən* — արա), ըղձականի ապառնի ժամանակը (*guyum* — ասեմ, *k'anəm* — անեմ), պայմանականի ապառնի ժամանակը (*mgum* — կասեմ, *mekənəm* — կանեմ): Մնացած բոլոր ձևերը կազմվում են անցյալի հիմքից:

Սահմանականի անցյալ անկատարն արտահայտվում է *mi*, *me* նախդիրների, անորոշ գերբայի հիմքի և *biran* օժանդակ բայի հարադրությամբ. օրինակ՝ *miğirist'an birəm* — լաց էի լինում, *mi'tran birəm* — սղում էի:

Սահմանականի անցյալի ապառնին կազմվում է *mi*, *me* նախդիրից, *st'ran* եղանակիչից և անորոշ գերբայի անցյալի հիմքից. օրինակ՝ *mistrim duxt'an* — կարելու էի, *mistring k'ašt'an* — ցանկելու էինք: *Mistrim* եղանակիչը նոր պարսկերենի *میخواستم* բայն է, որտեղ կատարվել է *xa* վանկի կորուստ և *ri* սոսկածանցի հավելում: Նույն երևույթը կատարվել է *guftran* *گفتن* ասել բայի հետ, որը սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակներում *muguftran*-ի փոխարեն հանդես է գալիս *mi'tran* ձևով, որտեղ *guf* վանկը ամբողջովին սղվել է՝ *mi-guf-t'ran* > *mitran*:

Անցյալ կատարյալ, հարակատար և վաղակատար ժամանակներն արտահայտվում են վերջավորությունների միջոցով. օր. *ras satəm* — կառուցեցի, *ras satəm* — կառուցել եմ, *ras sateyəm* — կառուցած եմ:

Պայմանականի և հարկադրականի ապառնի ժամանակները ձևով իրարից չեն տարբերվում: Ըղձականից պայմանականը տարբերվում է *me* նախդիրով. օրինակ՝ ըղձ. — *guyum* — ասեմ, պայմ. — *məgum* — կասեմ:

Ըղձականի, պայմանականի և հարկադրականի անցյալ ապառնի ժամանակներն արտահայտվում են միևնույն ձևով՝ ժխտական խոնարհումը կազմվում է հաստատական խոնարհումից, *nā* ժխտական մասնիկի օգնու-

թյամբ՝ ինչպես՝ naxəşreyəm — քնած չեմ, naməbram — չեմ գնա, naməbrand — չեն գնա:

Ոռնարհման միկնույն ձեր հաստատ է բայերի բոլոր տեսակների համար: Satan — անել օժանդակ բայի խոնարհման ժամանակ բոլոր չինգ եղանակների ապառնի ժամանակներում satan-ի փոխարեն ունենում ենք k'ən — պ. ڪن — անել բայը:

Հայ-թաթերենում հարադիր բայերը մեծ մասամբ կազմվում են հետևյալ բայերով.

ա) satan — պ. ساختن — kura satan — հավաքել, jira satan — ընտրել, ras satan — կառուցել:

բ) daran — պ. دادن — řah daran — աղատել, xaris daran — քրել, snaxt'an daran — ծանոթացնել:

գ) bəran — պ. بودن — k'uff'a bəran — ծեծվել, rəxt'a bəran — թափվել, sar bəran — ուրախանալ:

դ) raft'an — պ. رفتن — samah raft'an — պարել:

ե) burran — պ. بردن — řav burran — ճանապարհ կտրել:

զ) giriftan — պ. گرفتن — buy girift'an — հոտել:

Պատճառական բայերը կազմվում են երկու կերպ:

ա) und ածանցի միջոցով՝ nist'ān-nusundān — նստեցնել, xəran-xəsündan — քնեցնել, xandiran-xandundan — ծիծաղեցնել (պ. جواندندن):

բ) daran — պ. دادن — բայի հարադրությամբ՝ vaxišt'an dāran վերկացնել, snaxt'an dāran — ծանոթացնել, samah dāran պարեցնել:

Կրավորական սեռի բայերը կազմվում են bəran — بودن — բայի հարադրությամբ. ինչպես՝ suxt'a bəran — այրվել, p'čunda bəran — փաթկվել:

Հայ-թաթերենում դործածվող մակբայների մեծամասնությունը պարսկերեն մակբայներն են՝ մասնակի հնչյունափոխությամբ:

abrün	պ. از بیرون	զբախց
azinp'ast'a	پس از این	այսուհետև
alga		զարձյալ
anjaγ		հաղիվ
konya		դոնե
hamdgār	պ. همدرد	միասին
yavaš	په آه	կամաց

Հայ-թաթերենի կապերը կարելի է բաժանել նախադրությունների և ետադրությունների:

ա) Բրբե նախադրություններ դործ են ածվում siyan — դեպի, viyan — առանց, t'aba — մինչև կապերը. օրինակ՝ miraft'anəm siyan zir — դնում եմ դեպի ներքև, taba bist tiv — մինչև քսան թվականը, viyan xuna či kənəm? — առանց տուն լինչ անեմ:

Երեք նախադրություններն էլ պահանջում են հայցական հոլով:

բ) Ետագրություններ են՝ berii — համար, aq'uli — մասին, bdari մեջ, bsari — վրա, p'šoyi — գիմաց, gora — համեմատ, bik'ineyi — մոտ, կողքին կապերը. օրինակ՝ ura beri — նրա համար, t'una aq'ult'an — քո մասին, xuna bdari — տան մեջ, stola bsari — սեղանի վրա:

Բարբառոն ունի հետևյալ շաղկապները՝

aga	պ. اګر	էթէ
agana	» اګرنه	էթէ ոչ
amina	» اما	բայց
guvak'i	» گوياکه	իրրե թէ
ya	» يا	կամ
ham	» هم	թէ

va — և, ու շաղկապը հայ-թաթերենում լայն կիրառում հունի, ինչ-պիսին նա ունի նոր պարսկերենում: Թաթախոս հայերը հաճախ համադաս բառերն արտասանում են առանց շաղկապի, ինչպես՝ dāsmam poman — ձեռքս ու ոտքս, zarī mard — մարդ ու կին, dara, akuskara band — դռներն ու պատուհանները փակիր:

va շաղկապի փոխարեն կիրառվում է yek'is — մեկ էլ շաղկապը, այն էլ երբ համագալթող բառերը երկուսից ավելանում են. օրինակ՝ man, tu yek'is u — ես, դու և (մեկ էլ) նա, Aram, Suren yek'is Karo — Արամը, Սուրենը և Կարոն:

Հայ-թաթերենի ձայնարկությունների մեծամասնությունը համընկնում է հայերենի աման և նրա բարբառների ձայնարկություններին. ինչպես՝ ax — ախ, amān — (ազրբ.), de — դե, e — է, ey — էյ, t'yu — թյու, hey — հեյ, hə — հը, vay — վայ, va — վա, uf — ուֆ, uxāy — ուխայ, šabaš — պ. شادباش — հրճվանքի բացագանչություն պարելու ժամանակ, haray — հարայ, hayda — քչելու, վտարելու բացագանչություն:

Հայ-թաթերեն բարբառի բառային կազմում, բացի թաթերեն, պարսկերեն և հայերեն բառերից, կան նաև հարևան այլ ժողովուրդների լեզուներից փոխառյալ բառեր, ինչպես՝ škola — դպրոց, akoška — պատուհան, q'osi — հարևան, cay — գետ, iravunk' — իրավունք, konya — գոնե, kure — կուրծ:

Փոխառություն մեջ կան ոչ միայն առանձին բառեր, այլև մասնիկներ, ածանցներ և վերջավորություններ. օրինակ՝ luɣ, daaluɣ — տասնոց, ji-panjinji — հինգերորդ, ing (ինք) — guftiring — առաջինք:

Բայերն այլ լեզուներից անցել են գերբայական ձևով, որոնք գործ են ածվում մեծ մասամբ satan օժանդակ բայի հարագրությամբ և խոնարհվում է միայն օժանդակ բայը. օրինակ՝ sksil satan — սկսել, ort'nil satan — օրհնել, yazmiš satan — գրել, zarit satan — տապալկել:

Կան պարսկերեն բառեր, որոնք մասամբ նամբ բոլորովին իմաստափոխվել են. ինչպես, օրինակ՝ պարսկերենի افتاد — ընկնել բայի իմաստը հայ-թաթերենում լայնացել է:

Երբ թաթախոս հայն ասում է aft'aram, կարող է հասկանալ և՛ «ընկել եմ», և «սպանվել եմ», իսկ kaṛat' — کاغد բառը նշանակում է և՛ թուղթ, և՛ տետր, և՛ գիրք, և՛ մատյան:

Պարսկերենի همباز — hambaz բառը, որ նշանակում է միասին իրադացող (միայն խաղընկեր), բարբառում կիրառվում է պարսկերենի رفیق — բնկեր բառի փոխարեն:

آش — aš բառը պարսկերենում նշանակում է սպուր, իսկ հայ-թաթերենում՝ փլավ:

Պարսկերենի کندن — քանդել բայի վաղակատար դերբայի և bəran — լինել օժանդակ բայի հարադրությամբ, բարբառում արտահայտում է հանվել բայի իմաստը, օրինակ՝ kandä bəram (պ. کنده بودم) — հանվում էի: Նման օրինակներ շատ կան բարբառում:

Բառաստեղծում տեղի է ունենում նաև ածանցման միջոցով: Բառաստեղծման համար բարբառում օգտագործվում են հետևյալ ածանցները. ա) նախաձանցները՝

bi. — biabur — պ. بیابور — անամթ, bik'ar — պ. بیکار — անգործ:

va նախաձանցով առավելապես բայեր են ստեղծվում. օրինակ՝ varasjan — վերջանալ, vamux'tan — սովորել, vaxistan — վեր կենալ, vap'arran — թռչել:

vian. — vianxuda — (պ. بی ان خدا) — անաստված, vianaq'il — անխելք:

բ) Վերջաձանցներ՝

a. — k'uft'a — պ. کوفته — ծեծած մսով ճաշ, häst'a — պ. بسته — փակ, dərza — պ. درخت — սլաքաձու:

i. — avoni — պ. آونی — երկաթե, arusi — պ. آروسی — հարսանիք, p'asmi — պ. پاشی — բրդյա, p'anäk'i — պ. پنهان — գողտնի:

in. — c ilk'in — պ. چرکین — կեղտոտ, sabein — առավոտյան, pitlein — կրտսեր, փոքրիկ, k'alein — մեծ, ավագ:

dun. — munūkdūn — պ. نمکدان — աղաման:

gar. — xundagar — պ. خواننده — կարդացող, fürmündagar — խաբերա:

gun. — t'arsagun — պ. ترسگون — վախկոտ, zist'agun — տարուտ:

k'ar. — t'amahk'ar — պ. طمعکار — ընչասեր:

ča. — sovča — կուլա, t'ap'anča — պ. طپانچه — ատրճանակ:

Պարսկերեն և սերիշ լեզուներից փոխառյալ բարդ բառերից բացի, բարբառն ունի իրեն սեփական բարդությունները. ինչպես՝ asp'xound — ճիատեր, diyust'ani — գյուղացի, zant'eyfa — տանտիկին, xoyagna — ձվածեղ, soxar — տալ (գոյ.), sčbrar — տագր, p'oraq'abi — (ոտնաման) կոշիկ, koura-giyov — գարուն:

Այլևսորդ չենք համարում մի երկու խոսք ասել մեր եզրակացության մասին, որ հայ-թաթերենն իրանական բարբառ է, և որովհետև նրանով խոսում են միայն հայերը, այն մեծ ազդեցություն է կրել հայերենից թե՛ նշյուկնաբանության և թե՛ քերականության մեջ. իր առանձնահատկություններով տարբերվում է նաև միայն պարսկերենից, այլև թաթերեն մյուս բարբառներից: